

**«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

“Հաստատում եմ”

Բուհի ռեկտոր

_____ Խաչատրյան Գ.Կ.

“ ___ ” _____ 2015թ.

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ում

Գիտության զարգացման 2015-19թ.թ. գերակայությունները

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ _1__

“_30_” _____ 01_____ 2015թ.

ՎԱՆԱԶՈՐ- 2015

I. Ներածություն

1. ՎՊՀ-ում գիտության զարգացման գերակայությունների որոշումը նախատեսված է ՎՊՀ-ի 2015-19թ.թ. զարգացման հայեցակարգով:
2. Գերակայությունների որոշման համար հիմք են ծառայել ՀՀ Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության», Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի N20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության», «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի 2014-18թթ. զարգացման հայեցակարգի», «ՎՊՀ-ում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթների» հիմնադրույթները:
3. Գերակայությունների սահմանումը պայմանավորված է նրանով, որ նախ՝ անհրաժեշտ է դրանք համապատասխանեցնել հանրապետությունում իրականացվող հետազոտություններին, առկա գիտական ներուժին, ինչպես նաև միջազգային փորձին՝ առաջին հերթին գիտության և ինովացիայի բնագավառում Եվրամիության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրի գերակայություններին:
4. Գերակայությունը միջճյուղային նշանակության ընդհանուր ուղղություն է, որը գիտության և գիտատար արտադրությունների զարգացման հիման վրա կարող է առավելագույնս ներդրում ունենալ երկրի անվտանգության ապահովման, տնտեսական աճի, գիտատեխնիկական զարգացման, հասարակական առաջընթացի և մրցունակության բարձրացման մեջ:

5. Գերակայությունները պետք է տրոհվեն հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների, իսկ վերջիններս իրենց հերթին պետք է բաժանվեն կենկրետ գիտահետազոտական և (կամ) գիտատեխնիկական թեմատիկաների:

II. 2015-19թթ. գերակայությունները և դրանց հակիրճ նկարագրությունները

6. ՎՊՀ-ում գիտահետազոտական աշխատանքների գերակայություններն են՝

1) հայագիտություն,

ա) հայագիտության զարգացումը կոչված է պահպանելու հայ ժողովրդի ազգային նկարագիրը, խթանելու ազգի հոգևոր-մշակութային զարթոնքը և նպաստելու ազգային ինքնագիտակցության խորացմանն ու ամրապնդմանը:

բ) գերակայության շրջանակում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնարար ուղղությունների, ինչպիսիք են, մասնավորապես, լեզվաբանությունը, գրականագիտությունը, հայ ժողովրդի պատմությանը, պատմամշակութային ժառանգությանը նվիրված ուսումնասիրությունները, հայագիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացումը:

2) գիտություններ կյանքի մասին.

ա) կյանքի մասին գիտությունների զարգացումն ունի սկզբունքային նշանակություն կյանքի որակի և չափանիշների ուղղությամբ իրականացվող հետազոտությունների և մշակումների մեջ.

բ) գերակայության շրջանակում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, դեղաբանությունը, դեղերի

արտադրության տեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիական արտադրությանը նվիրված հետազոտությունները:

3. արդյունավետ և անվտանգ էներգետիկա.

ա. էներգետիկայի դերն ու նշանակությունը պայմանավորված է հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման, տնտեսության էներգաարդյունավետության բարձրացման, վերականգնվող էներգապաշարների արդյունավետ օգտագործման, ըստ տեխնոլոգիաների և հարակից բնագավառների զարգացման անհրաժեշտությամբ: Այդ խնդիրները ունեն ռազմավարական նշանակություն, քանի որ մեր երկրում բացակայում են արդյունաբերական նշանակություն ունեցող սեփական հանածո վառելիքաէներգետիկ պաշարներ:

բ. գերակայության շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների /տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, էներգիայի սպառման արդյունավետ օգտագործմանը և էներգախնայողության մակարդակի բարձրացմանն ուղղված ուսումնասիրությունները.

4. տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ.

ա. ոլորտը տեղեկատվություն հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի ամբողջություն, ինչպես նաև այդ գործընթացներում առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգ է, որն ակտիվորեն ազդում է տարբեր ոլորտների աշխատանքների արդյունավետության վրա:

բ. տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակներում պետք է ուշադրություն դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/ տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, առաջատար էլեկտրոնային

ենթակառուցվածքների և ծառայությունների զարգացմանը նվիրված ուսումնասիրությունները և լուծումների մշակումը, մեծ տվյալների պահպանումը, մշակումը և վերլուծությունը, բարձր արտադրողականության հաշվողական տեխնոլոգիաների մշակումը, գիտական, գիտատեխնիկական, տնտեսական և հասարակական մարտահրավերների լուծմանն ուղղված թվային մոդելավորման մեթոդների մշակումը և այլն:

5. գիտություններ երկրի մասին.

ա. երկրի մասին գիտությունները կարևորվում են հասարակության և տնտեսության վրա ունեցող իրենց ազդեցության նշանակությամբ՝ սկսած գիտական հայտնագործությունից մինչև բնական ռեսուրսների և աղետների կառավարում,

բ. երկրի մասին գիտությունների շրջանակում պետք է ուշադրություն դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/ տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետ եղանակների մշակումը, երկրաբանությունը, երկրաբանական վտանգավոր երևույթների (սողանքներ, սելավներ և այլն) կանխատեսման և դրանց դեմ պայքարի միջոցառումների մշակումը.

6. միևնույն ժամանակ գերակայություններում, հիմնական ուղղություններում կամ տեխնոլոգիաներում չընդգրկված գիտահետազոտական թեմատիկաները նույնպես պետք է ստանան համալսարանի աջակցությունը. գիտական ենթակառուցվածքները պետք է հավասարապես մատչելի լինեն բոլոր ծրագրերի ու թեմաների կատարման, այնպես էլ բոլոր հետազոտողների համար:

